

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարին	համար
սարկիսի	12 ֆր.
վեցամսայ	7 "
Արսասահմանի	
համար սարկիսի	15 ֆր.
վեցամսայ	8 "
Ավերիկայի	համար
սարկիսի	3 ռ.
վեցամսայ	1.50 "

Իրանացի սոցիալ-
նաչխի երեսին համար
40 սանթիմ իսկ վերջին
երեսին համար 20 սան-
թիմ է. հրեհին առջի
ակազմերու համար
20 0/0 զեղջ կրչայ:

Վանաչի համար ձեռ
ի 40 սանթիմ է

ՉԱՐՈՒՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ՝ ԲԱՎՈՒԻ ՉՈՐԵՔԵՐԻՔԻ ԵՒ ՇԱՐՋՈՒ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

համակ եւ դրամ
դրկիչ խմբագրութեան
հասցիին

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
"Charjoum"
Varna (Bulgarie)

Պուշկարինի համար
ձեռքի
15 ՍԱՆԹԻՄ
Արսասահմանի համար
ձեռքի
20 ՍԱՆԹԻՄ

Գրութեան և լեզ
բունի

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՐԸ ԲԱԺՆԵՒԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԻՆԻՎ ՎՃԱՐԷ

Café Promenade Vienne

Այս շքեղ սրահարանը կը գրե-
նուի վիճին Երանց Ժուզեֆ
քարափին վրայ. կը ստանայ զա-
նազան հայերէն թերթեր. Առ
հասարակ բոլոր հայ կամ արե-
ւելքցի վաճառականները այս
տեղ կը յաճախեն. Ուստի օտար
երկիրներէ եկող հայերը կը հրա-
ւիրուին գիմել հոս ուր պիտի
գտնեն իրենց յարմար գիւրու-
թիւնները և անհրաժեշտ տեղե-
կութիւնները:

ԳՐԱԳԻՐՆԵՐԸ

Ողորմելի է դասակարգը սա-
տետրակներու կամ թուղթերու
առջեւ երկուքի ծալուած մար-
դուկներուն, որոնց գրագիր ա-
նունը կուտան ընդհանրապէս:

Վարձուած, ծախուած, անբա-
նացած, այդ խեղճերը կը մտա-
ծեն, կը պզտան, կը խօսին, կը
հագուին, կուտեն ու կը շար-
ժին ինչպէս իրենց չորպաճին,
ու այս ամէնը ոչ թէ զղուանքով,
բռնադատուածի մը պարբերա-
կան ընդզուգումով, այլ, ընդ-
հակառակը, ախորժով, հպար-
տութեամբ, կապկուցեան մէջ
մէկվմէկ գերազանցելու ճիգե-
րով. իրենց գոյութիւնով ծախ-
ուած՝ հոգիով ալ կամովին կը
ծախուին, կը ստրկանան, կը
ցածնան մինչեւ որ պորտերին
հոգին քուր չորպաճին պատ-
ուանգան ըլլալու համար:

Օ՛հ, Ողորմելիները:
Իա՛ց ասոնցմէ մէկուն գան-
կին դռները, մտի՛ր անոր ու-
ղեղին մէջ՝ փնտտելու թէ ի՞նչ
կայ հոն. երկու հաշիւ ու չորս
բանաձեւ պիտի գտնես ամբողջ.
Չորս ամէն օր նոյնութեամբ կը
կաղապարէ, կը կարկինէ, կը
աւտարէ ու կը քչէ. բանտերի,
հմուտի, մասնագէտի անհնարին
ինքնավստահութեամբ ու ամբար
տաւան մեծամտութեամբ:
Անցիր անկէ, եթէ կուզես.

սրտի ներսերը. Օ՛հ, զարհու-
րելի է այլեւս. մարդ չի կրնար
հանգուրժել լճացած ճահճային
աղտեղութեանց կոյտճ տեսնելով
հոն:

Մտը, փորը գրաւած են սրտին
երեք խոռոչները, ու մէկին մէջ
տեղաւորուած են համակ անաս-
նական զգացումներ, արհամար-
հանք գէպի բոլոր ազնիւ ու վեհ
գործերը, այն ամէն ձեռնարկ-
ները՝ որոնք ճանաչող գրպանի
կը գպին. Մարդկային թշուա-
տութիւնը երբէք իր սրտին լա-
րերը չի յուզեր. նիւթապաշտի
անտարբերութեամբ կը գիտէ
զայն, կը զայրանայ նոյնիսկ:
Ազգ, հայրենիք. դպրոց, գրա-
կանութիւն իր սրտին մէջ տեղ
չունին բնաւ, որոնց վրայ կը
խնդայ միայն:

Կոկիկ հագուած, մաքուր, յա-
ճախելով միշտ ամենէն կանոնա-
ւոր ու փայլուն հասարակաց զօ-
սաձայրերը, միամիտներու ըզ-
մայլանքին ալ առարկայ կը ըլլայ.
«Ո՛հ, ի՞նչ իմաստուն, ի՞նչ խե-
ղացի, ի՞նչ ազնիւ երիտասարդ
է», կաղապարեն իր շուրջը:

Գիւրիւն բան չէ սակայն գրա-
գիր ըլլալը. կրնա՞ս ուրանալ
քու էութիւնդ, ծախուիլ մտքով
ու սրտով. մոռնալ այնպիսի մէջ
ինչ որ ազնիւ է, գեղեցիկ վեհ
ու իտէալ, կրնա՞ս հատուցել գր-
պաշտածեցնել մեծաւորիդ հա-
մոզումներուն, անբանանալ, գը-
րաստանալ, աշխատիլ, տանջուիլ,
արիւն քրտինք թափել առանց
սպասելու որ յարգդ գիտցուի,
միջոց աչքիդ առջեւ ունենալով
նախատուելու, վաճառուելու, փոք-
րիկ անզգուշութեան մը կամ ա-
կամայ թերութեան մը համար
անլուր առականութեան ենթարկուելու
վախը, որոնց երբէք արժանի
չի պիտի տեսնէր զքեզ իր պատ-
կերին համեմատ շինող Աստուա-
ծը. եւ այս ամէնը չի կարծես
թէ մեծ մեծ վարձատրութիւն
ներու փոխան. վերջի վերջոյ
դարձեալ ապագայ փողոցի մայ
թերը շափելն է, ուր պիտի նե-
տեն քեզի, երբ այլեւս ձեռ-

քերդ սկսին կըտուիլ, աչքերդ
տկարանուն ու ականջներդ ծան-
րանուն. Եւ հոն այդ տաճարնե-
րու մէջ, ուր երկար ատեն ան-
խարդախ հաւատարմութեամբ
տատեցար ու կեանքդ մաշեցու-
ցիր, դուն պիղծ անդամ մը պի-
տի ըլլաս. երբ այլեւս քամուե-
լիք կաթիլ մը չես կրեր մէջդ,
ու պիտի նետուիս աղտոտ ցնցո-
տիի մը պէս:

Իայց երբէք մի մտածեր այդ
սեւ օրերուն վրայ, որոնք պիտի
գան վերջապէս, որովհետեւ ե-
ռանդդ պիտի մարի, պիտի յու-
սահատիս, պիտի տխրիս, միտ-
քդ պիտի չըզբազի ու պիտի
կորսնցնես արթնութիւնդ. Ասի-
կա կը վնասէ քու տիրոջդ շահե-
րուն. Գուն անոր միշտ զուարթ
պիտի շերտեալ, տրամագիր իր
հրատանները ընդունելու և կա-
տարելու, զինքը գրապեցնելու և
հետաքրքրելու. պիտի գրես,
պիտի հաշուես՝ երբ ան հաշիւ կը
պահանջէ, հոգ չէ թէ միտքդ
տրամագիր չըլլայ՝ գործելու.
պիտի խօսիս. պիտի խնդաս երբ
սիրտդ կուլայ. Ապա թէ ոչ դուն
գործի մարդ չես:

ՇԱՂՍՊ

ԽՈՒՅԵՄ ԱԶԳ ՍԸ

Այսօր բոլոր աշխարհիս անկիւն-
ներն, ուր որ մէկ հայ գտնաս և
հարցնես, թէ մեր հայրցս այս թըշ-
ուառ ու արիւնոտ վեհակէն ինչ կեր-
պով ու ինչ միջոցով կարելի է ա-
զատիլ, անկիւն իւրոյն քեզի հինգ
տասը խորհուրդներ ու խրատներ
կուտայ և անանկ պարզ ու որոշ ու
պահանջկոտ կը խօսի, կարծես թէ
Եւրոպայի մեծագէտ պետութեանց ա-
մենաբեւեռի քաղաքագետներէն մէկն
է. Սակայն հարցուր, աշխարհագ-
րութիւն գիտես, կրտէ՞ ո՛չ. պատ-
մութիւն գիտես, կրտէ՞ ո՛չ. ֆրան-
սերէն գիտես, կրտէ՞ ո՛չ. Եւրոպայի
գիւտնաքննարկը կը ճանչնաս, հե-
տերին յարաբերութիւն ունի՞ս,
քաղաքագրութիւն գիտես, ո՛չ. ո՛չ. ո՛չ.
Ապա խեղճ թշուառական, ալ ինչո՞ւ...
Խիտ քիչ հայեր կան, որ անկեղծ
մտօք կը խոստովանին, թէ մեր հայ

ազգն իր այժմեան տագնապալից վի-
ճակէն ազատելու ոչ կերպ գիտեն ոչ
միջոցը. եւ որչափ մէկը խելօք է,
գիտուն է, փորձառու է, այնչափ
պարզ և որոշ խօսքերով կը դաւանի
իր այս մասին տգիտութիւնը. Բայց
տղէտը, անմիտը, այս կեանքոտ խեղ-
րին հոտը չառած մէկը որչափ առա-
ւել բան չը հասկցող մէկն է, նոյն-
չափ յանգուզն և անմտ լինելով կը
յայտնէ իր գաղափարները. Գանի՛
քանի՛ անգամ պատահած է, որ մի
տղէտ ապուշ մարդ կամ կին ծանր
հիւանդի մը այցելութեանը կուգայ
և իսկոյն այդ մերձեմահ հիւանդին
ձմեռուկ կամ դեղձ ուտել կը հրա-
մայէ կամ կրիայի միտ կամ մի ու-
րիշ պիղծ կենդանի ճերմակ թօքը
կը պատուիրէ, կամ այս կամ այն
խոտը կամ հողը, չը նայելով որ ոչ
մարմնազննութենէն, ոչ արեան շըր-
ջանէն, ոչ մարտոզութենէն և բժշկա-
կանութեան անթիւ գիտութիւններէ,
մէկէն անգամ մազի մը չափ հառկա-
ցողութիւն չունի. Եթէ մի այդպիսի
տրամար ինքնահաւանին ձեռքը մի
թմբուկ դնես ու երկու թմբկանար
ճիպոտ, թէ զարկ ինչպէս որ կը վա-
յեթէ, որովհետեւ ատոր համար գի-
տութիւն, ուսում պէտք չէ. անկիւն
այդ ամենաչնչին ու արտաքին բանը
չգիտնալը յանձն կանէ, իսկ բժշ-
կութիւնը ծայրէ թծայր գիտցող ի-
մաստուն կը ձեւանայ, ճիշդ այսպէս
են այսօր մեր մէջը հարիւրաւոր ու
բիւրաւոր հայեր, որոնք իրենց օրա-
կան հայր ճարելու կերպն ու միջոցը
չեն գիտեր. իսկ ինքզինքնին Հայն
ու Հայաստանը տաճկին ու ոռուին
ձեռքէն ազատող հսկաներ կը համա-
րին:

Այսօր Յինյանդիայէն նամակ մը
ստացայ, թէ առանց արիւն թափե-
լու ոռու կառավարութեան հետ խել-
քով ու խոհեմութիւնով վարուելով,
աւելի առատ ազատութիւն ստացանք
քան երբէք ունեցած ենք. Ռուսիոյ
և արտասահմանի հրէաները, որոնք
այսօր ոռու ազգը կը գրգռեն ոռու
կառավարութեան դէմ, որպէսզի տա-
պալեն այդ իշխանութիւնը և ատոր
փոխարէն մի հասարակապետութիւն
կազմեն և իրենք իրենց խելքովը եւ
գրամովը այդ նոր պետութեան գը-
լուխն անցնեն, քանի մը ամիս աս-
կէ առաջ գացին Յինյանդիայ և առա-
ջարկեցին անոնց, որ հրէաներուն
հետ միացած ապստամբին ոռուին
դէմ ու միասին շարունակեն այդ ա-
պստամբութիւնը: Բայց խելօք ու
գիտուն Յինյանդացիք միջոցին
վաճառեցին զանոնք ըսելով, թէ վ-

րենք լաւ գիտեն իրենց ընելիքը, ու ըրին ու փառաւոր նպատակին հասան: Այսօր ֆինլանդացիք՝ մարդիքն ալ կանայքն ալ՝ իրաւունք ունին իրենց համար փարլամենդ կազմելու համար պատգամաւորներ ու նոյն իսկ պատգամաւորութիւններ ընտրելու: Ինչ այդ նամակը գործը կը սկսէ, թէ այդ փարլամենթի պատգամաւորութիւնն, որ պիտի ոգելից ըմպելեաց առևտուրը եւ մանաւանդ գինեատենները խափանեն, որպէսզի անոնց արական սեռն այլեւս այնքան պատեհութիւն չունենայ գինովալու ու թշուառանալու:

Արք. Ամիրխանեանց

Կ Ր Թ Ա Վ Ա Ն Շ Ա Ր Ց Ե Ր

Ա Ր Ձ Ա Յ Ո Ւ Ր Դ Ն Ե Ր Ը

Պարտաւոր մայրեր, որ միշտ կը սիրէք հաճելի ըլլալ եւ չէք յոգնիր մարդոց քոմբը լի մանկներէն, վախճէք ձեր կանխահաս մանկներուն, եւ առաւել եւս, ձեր աղջիկներուն բարեհաճութեան եւ փճախօսութեան օրինակը տալէ: Գիտցէք որ տղաներ կան, շատ տղաներ, որոնք աղօտակի կը հասկնան թէ դուք ձեր պարտականութենէն դուրս էք, որ իրենց կան, որոնք սաստիկ կը նախաձին եւ թէ՛ Սիրոյ էջ մը: Ինչ մէջ Ձօլայի ստեղծած պզտիկ աղջկան թիւր երեւակայական չէ:

Այս մասին զգայուն գաղանթներ ստացայ: Պզտիկ տղայ մը կը ճանչնամ, արդէն հիւանդոտ եւ տխուր, ինը տարու է, որ իր մայրն ատելու մօտ է, անոր պարտականութեան պատճառաւ:

Եթէ ձեր տղաքը քիչ մը ջղային են, կա՛մ բնաւ ծով մի՛ մտցնէք, կա՛մ քրէ, բացի կատարելապէս խաղաղ, երեսն եւ յատակն ալիք չունեցող ծոցի մը մէջ, Ձգային աղուն շունչը կը կարի ծովուն մէջ, որուն շարժումն եւ պզտիկ զայն շափազանց ուժգնորէն կը գրգռեն, շնչասպառ կընեն կը ջլատեն:

Բաւականացէք զայն քանի մը վայրկեան ջուրին մէջ խոթելով, կամ, աւելի լաւ, ամէն ատու, յոգաբանին մէջ, հանդարտօրէն գաղջ ծովու ջուրի լրգանք մը ընել տալով:

Գ Ր Ե Ծ

ՕԳՏԱՎ ՍԻՈՊՈ

ՀԱՅՐ ԲԱՆՖԻԼ

(Թարգմանուած ֆրանսերէնէ)

— Երբոր ժիւլ Ռէնոյի ճամբուն վրայ կը գտնուէր մտածեց այդ օրը անցնել Հայր Բանֆիլի հետ իր անցեալ օրուան այցելութենէն ի վեր, մեծ խղճի խայթ մը, խորին տպաւորութիւն մը մնացած էր իր մէջ: Եւ շատ անգամներ, մտադրած էր վերադառնալ այդ վսեմ խելագարը, եւ հաշտուիլ անոր հետ: Նոյն իսկ խնթութիւն մը ինկաւ միտքը, ինչո՞ւ համար Ռէնոյ չը ըրնակէր, եւ ձեր վանականին հետ չը կենակցիք: Երկու պիտի պեղէր,

Ասոր փոխարէն, կրնայ երկար ժամեր եզերքի աւազներուն կամ ալ եակներուն մէջ կենալ սրբանքները մերկ:

Միջին հաշուով, ծովեզերեայ օդային խոնրութիւնը պէտք է տեւէ տասներեք քառորդ քառորդ, բնա՛ւ աւելի: Յետոյ զանոնք գիւղ կը տանիք, այն գիւղն ուր կրնաք, առողջապահական պայմաններով օժտեալ տուն մը գտնել: Նախընտրելով ծառախիտ բլրակի մը վրայ շինուած տուն մը կամ լեռ կը տանիք 100 մէջը բարձր: Գարնականները կը գրինան միջին հաշուով հնգէն եօթը քիւտ երեք շաբաթուան մէջ:

Գիւղը, ազատ թողուցէք գիրենք իրենց լինթացքին մէջ, ջանացէք մանաւանդ նախաձեռնութիւն մը թողուլ իրենց, սորվեցուցէք ինքնիրեն նին շատ մը բաներ լաւ կատարել, ձի մը լծել ու վարել, եւ ցորենը վարսակէն, հացի մը խնձորենիէն զանազանել: Բազմազան պոսոյաներ կատարել մի՛ տաք շատ:

Դեռատի ուղեղներու համար, նըման եւ քիչ մը միօրինակ օրերը յոյժ լրական օգուտներ ունին: Ժամը չորսին ատենները, նախընտրելէն առաջ, գաղջ աղի ջուրով լաւ լողացնէք մը ընել տուէք, աստիճանաբար պաղեցնելով, վերջապէս աշխատեցնէք զանոնք: Օ՛հ, շատ մի աշխատեցնէք, ժամ մը առտուն եւ կէս ժամ իրիկունը ձիւտ պէտք եղածին շափ իրենց հասկցնելու համար թէ հանգիստը այնպիսի բան մըն է որ կը գնուի, թէ աշխատութիւնը մէջնօրեայ հացի պէս բան մըն է, պէտք եղածին շափ ամէն օր իրենց տալու համար, որ ինչ ամէն զգացողութենէ կարեւոր: Առկէ գատ, կառաջարկեմ որ հետեւեալ կերպով անցնեն իրենց օրը, ժամը 7ին քոչնէն կալալ, առտուն լուսացուցներ, նախաճաշ:

8էն 9.— Բաց օդին մէջ աշխատանք պատահանները բաց, կամ աւելի լաւ, պատշգամբ մը վրայ, պարտէզի մը մէջ կամ մեծ ծառերու զով շուքին տակ:

9էն 10.— Աղբեր եւ սրբողներ, ճիւղ կ'ըստին.— ճաշ, յետոյ ժամ մը հանգիստ:

2էն 4.— Աղանք եւ նախընտրելիք, 4 կէսէն 5.— Դաս, 5էն 7.— Պոսոյտ:

Ճառեր պիտի հանէք, հանգանակէք... Ո՛չ, այլանդակ բան էր աս... Բակեղը նետե՛ր... Ի՞նչ թշուառութիւն... Ապա կանոնութիւնը անցնելիք իր միտքը սրբեմ կրելու վարժուած մարդուն ուսերուն վրայ: Արհամարհանք, կասկած, ահա ինչ որ պիտի սպասէր իրեն ամէնուրեք... Այն ատեն, փնտռեց: Հեռաւոր միտքաբանութեան մը մէջ լքուած պաշտօն մը... տեսնենք պիտի ուզէին գինքը... Վա՛նքը... հոն բնա՛ւ չպիտի ընդունէին գինքը... նորէն փնտռեց, տեղ մը չը գտաւ, ինքզինքը կորսուած զգաց, եւ վախցաւ: Մտաւորապէս նախաձեռնի մը պէս զբոլոններ կը հարձակէր: Կը քայլէր կորսուածակ ազգայնի տնկած, մահը հոգեոյն մէջ: Առտուն, կապտազեղ պայծառութեամբ կը ժպտէր նորագոյթ ծառերուն մէջէն եւ խնկաւազ գոյրը: Ինչ երկրէն կը սաւառնէին, նորածագ արեւուն համարյոյններուն տակ համակ սարսուռն:

7ին.— Ընթրիք: 8ին.— Անկողին:

Երբ տղաքն իրենց օրը այսպէս անցնեն, բնա՛ւ չեն զգար այն ձանձրոյթն որով երբեմն խաղալէ գատ ուրիշ բան ընել չեն ուզեր, եւ արձակուրդէն վերջ կը դառնան կազդուրուած, ուժովցած եւ միանգամայն առանց կորսնցուցած ըլլալու աշխատելու սովորութիւնն որով աշխատանքի վերսկսումը շատ դժուար չի գար իրենց մտադր ուղեղներուն:

Տօք. Մոսխա սը Ֆլէօթի

Նոր գումարուող դ պրոցակա ն առ օղջ ապահու թ հան երկրորդ համաժողովին մէջ հետեւեալ գլխաւոր որոշումներն ընդունուած են արձակուրդներու մասին

- 1.— Տարեկան արձակուրդն պէտք է ըլլայ առնուազն երկու ամիս:
2.— Կարելի չէ ջնջել Կաղանդի եւ Չատկի առթիւ տրուած արձակուրդներն առանց վնասելու տղոց առողջութեան:
3.— Կաղանդին տրուած արձակուրդն պէտք է ըլլայ առնուազն ութ օր, իսկ Չատկին առնուազն սասն հինգ օր:

1900 ին Չուիցերիական դպրոցական Առողջապահութեան Ընկերութիւնն ընդունած է աս որոշումը թէ արձակուրդները այնչափ պէտք է ըլլան որ տղաքը կարենան կատարելապէս յոգնութիւն տանել: Արձակուրդները պէտք է տեսնեն Տասնհինգէն տասնութ շաբաթ: Եթէ կարելի է, պէտք է բաժնել հետեւեալ կերպով չորս շաբաթ գարնան չորս կամ հինգ շաբաթ ամառն եւ մնացածն աշունին: Ինչպէս կը տեսնուի, Եւրոպացի կենսական խնդիր կը նկատէ մասաչոսերու ֆիզիքական եւ բարոյացի բոլոր մեծ գիտունները քրօնաւորները, բարձր խօսքները ընկերաբանները իրենց սեղաններուն վրայէն չեն վերցնիր երբէք պղտիկներու առողջութեան հարցը Մենք ի՞նչ կրնենք, երբէք խոչնած ենք այդ բանին վրայ երբէք այդ օրը զոհուած ենք մեր դպրոցներէն ներս ի՞նչ է պատճառը արդեօք որ մենք զարմանալի անհոգութեամբ մը չենք ուզեր զբաղիլ մեր պզտիկ:

նորով արդեօք ախտազ շարժը, ու կեանքը ներկա՞ն է միայն, ո՞վ պիտի մտածէ տպագրչին մասին: Հոգաբարձու մը ընտրած ատենին՝ որուն պիտի յանձնենք կրթական գործին պատասխանատուութիւնը, պահ մը գոնէ լիջօրէն կը խորհինք թէ ո՞վ է, ի՞նչ տեսակ նկարագրի տէր մէկն է մեր ընտրելին, եւ Հոգաբարձուն ուսուցիչ կամ տնօրէն ընտրած ատեն երբէք կը խորհի՞ տղայոց օգուտը, երբեք չի գիտի՞ր պիտի տա՞ն այս հարցումներուն ժխտական պատասխանը:

Ի՞նչ կըլլան կոր արդեօք մեր տղաքը աս դպրոցներուն մէջ, ի՞նչ տխուր ու ցաւալի քայքայում մը տեղի կ'ունենայ կոր անոնց մէջ, զիտէ՞ք արդեօք չէ՞, ձեզի ի՞նչ պէտք տղոց ֆիզիքականը, ձեզի պէտք եղածը այն է որ ձեր տղան պարզեւարաշխութեան հանդէպին օրը կամ տարեկան հարցաքննութեանց ատեն անուր ճիգերով դուրս փոխէ իր ուղեղէն ուսուցիչն իւրազուգած այլանդակ պարտականներն ալ աւելի այլանդակուած, ահա՛ մեր փնտածը, ահա՛ մեր ջանքը, որուն վրայ թէ՛ միախոր ուսուցիչը կը պարծի, թէ՛ մենք:

Անգամ մը առիթ ունեցայ յանկարծակի այցելութիւն մը աւալ մեր դպրոցներէն մէկուն, դուրէն հազիւ ներս մտած՝ ձանք գարշահոտութիւն մը փոշի թանձր ամպի մը հետ արգիւց շնչատու թիւնս: Նոյնպէս անբարեացարեւի գգայն մ'մը ունեցայ տեսնելով տախտակներուն աղտոտութիւնը կ'ակնհայտ անձնաթուղակներով վա՛յ սոսկալի, աս ինչ տխուր պայմաններու տակ կապրին եղբ մեր խեղճ տղաքը կը մտածեմ, կը փորձեմ դասարանէ մը ներս մտնել, երբեւակայեցէք պզտիկ սենեակ մը ուր տղաքը իրարու վրայ թխուած հազիւ կը շնչեն հո՛տ, հո՛տ սաքսափելի ահուկի հոտ մը, ի՞նչ կուտամ այս բանը հոն կ'ընցող ուսուցչուհիին որ ուսերը բարձրացնելով ի՞նչ կրնանք ընել, քանի որ յարմար դասարան չունինք կրտսէ՞ Սո՛յ, ի՞նչ կրնան ընել խեղճ ուսուցչիները քանի որ սխալ կրող հոգածու մարդ չկայ մեր մէջ:

հետագայ էր, շատ զօնակ եղբեր էր ինքզ Ռէնոյի համար, ձիւնահալիքը եւ փոխորկները հոն կուտակած էին նոր եւ բազմաթիւ աւերներ: Արբան տեսաւ ինչ որ տեսած էր ատենոք, ամէն բան քիչ մը աւելի յոսած ամէն բան քիչ մը աւելի ինկած, ամէն բան քիչ մը աւելի ամայացած եւ այդ անտանիք շէնքերուն, այդ ծուռ եւ խորիւստ պատերուն, անդադրուած փուռուցիներու, անընդհատ անկուցներու քառասնի մէջ, այս աւերած, մեռած եւ ցորտացած քանեւ, լուր սեւքը, դառն եւ սրտաճկիկ տխուր թիւն մը պատճառեցին անոր: Անիկա այս յուլիտ կործանած բաներուն վրայ կը գտնէր իր սրտին պատկերը: Իր կեանքին խորհրդանշանը: Անիկա կրկին անգամ տեսաւ փոքր գոր հայր Բանֆիլ պեղած էր, եւ որ հողին սահունէն գրկեց լնցուած էր այսօր, ուրիշ մը, աւելի հեռուն, կը բացուէր մայրու մը երկաւրակներու մէջ, Չմեռը որ նոր

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՂԵՆՍԿԱՆ ԱՐԱՐԻՆ
ՀԵՂԵՆՍԿԱՆԵՐՈՒՆ

ԸՂԴԶ. ԴԱՏԱՍՊԱՅԻՆ ՃԱՌԸ

—)o(—

(Մանգու մէջի-էֆքեարուն քաղաքում)

(Շար. Անի. ք/ւեհն)

Մեծ սնանկ մը զբարսիւլապատ տինամիթի խումբարաններ, քարիզի սնտուկ մը լեցուն տինամիթի պատրոյգներ, կարգ մը վնասակար թուղթեր, 15 հատ լեցուն խումպարա, 57 հատ տինամիթի ծրար, 10 սուսի տինամիթի քարսիւլ, երկտարական բարդեր, տինամիթի ժամացոյց, տինամիթի պարունակներ, շիշերու մէջ զրուած տինամիթի զեղեր տինամիթ շիշերու յատուկ գործիքներ, մազէրեան հրազէններ և հարիւրաւոր փամփուռներ, որոնք գրտական զննութեան համաձայն դեռ նոր շիշուած ու բերուած էին: Պէտք եղած քննութիւնները հեն ալ աւելի առաջ տարուեցան և ձերբակալու Տ/գրան նախատեսանի և երբորը ընդարձակ խոստովանութեան հասկցուեցաւ որ Իզմիրի մէջ ալ շատ մը եղեռնագործներ կան, որոնք իրենց եպերելի մտադրութեանց գործադրութեան համար որոշած էին կամուրջները աւերել, երկաթուղիի գիծերը քանդել, պանքաները օդը հանել և այս կարգի ձեռնարկներու մէջ գրտուել: Այս շար նպատակով, օրասնով հրահրի թ պարունակող քարիւղի տուփեր և ուրիշ շատ մը պայթուցիկ և քանդիչ նիւթեր զրած էին կամուրջներուն և ձաճանքներուն տակ և սկաններ փորած էին: Այս վնասակար նիւթերը մէկիկ մէկիկ հանուեցան իրենց պահուած տեղերէն: Աստուծոյ գառ Յակոբ անուն ստորին արարածը, Գրէտի Լիօնէի Իզմիրի Մասնաճիւղին վարձու գրամարկներէն մէկը վարձած և աւոր մէջ տինամիթի մեքենայ մը զետեղած էր, նոյն գրամատուրը օդը հանուելու մտադրութեամբ, զոր որոշած էին վերջնականակալ: Այս մեքենան ալ կարելի եղաւ զրտնել և հանել հոնկէց որով առաջըր առնուեցաւ նաեւ ախտաստիկի մեծ ոճիւրի մը:

Ահա այսպէս, շնորհիւ վեհ. կայսեր, չգործադրուեցաւ, հայ յեղափոխականներուն Պօլսոյ, Բերայի և Իզմիրի մէջ ձեռնարկելիք ապագայ արարքներուն և ոչ մէկը, զորս ծանուցած և հրատարակած էր Բիւրի-Գիւնաւ:
Իզմիրի մէջ կատարուած այս քննութիւններուն վրայ ժորիս երբ զարձեայ հայ քննութեացաւ, յայտարարեց թէ գիտէ որ Իզմիրի մէջ տեղի ունեցած այս յեղափոխական ձեռնարկները անձամբ կազմակերպած ու պատրաստած են Բիւրսերը, Սամուէլ Չայն և աղջիկը և Գարլ Եուզանովիչ կամ ուրիշ անունով Աշոտ, որոնք յետոյ Պօլսոյ եկած են: Հետեւաբար հասկցուելով որ այս երկու եղեռնական ձեռնարկները կապ ունին իրարու հետ, երբ Իզմիրի քննութեանց արդիւնքը պարունակող թուղթերը և տեղեկագիրը բերուելով հոս մանրամասն քննութեան մը ենթարկուեցան, հաստատուեցաւ որ, Աստուած մի արասցէ, եղեռնական արարքը Պօլսոյ մէջ կատարելէ ետք մասնաւոր խօսանիւղով մը անմիջակա Իզմիրի պիտի տեղեկացուէր, և հոն եւս մտադրուած անխնայարար ծրագիրները պիտի գործադրուէին, ինչ որ ժորիս խոստովանութեամբ ալ հաստատուեցաւ:
Սինկէրի վաճառատան մէջ ժորիսի գրասենեակէն գտնուած թուղթերուն մէջ երեւան հանուած տեղափոխի մը պարունակութիւնը քննուելով, արձանագրութիւն մը տեսնուեցաւ թէ Մանուկ անուն անձի մը 40 ոսկի տրուած է: Քանիցս հայցուեցաւ ժորիսի թէ այդ անձը ո՞վ է, սակայն ժորիս ուրացաւ և չպատասխանեց: Քննութիւն կատարուելով հաստատուեցաւ թէ ծանօթ կառուպան Մկրտիչ քաղաքակրթներէն Մանուկ անուն անձ մը Բերայի ձոնս արարիւմանին մէջ իրրու գոնսպան կը ծառայէ եւ թէ Սիւլիօ Րիչիի կամ վահարի զիմուսին վրայ Մանուկ կատարած է՝ վերջերս Մկրտիչը իր ծննդավայրէն՝ Սըվազէն բերելու վերաբերեալ գործողութիւններն ու թղթակցութիւնները: Հետեւաբար հասկցուեցաւ որ ժորիսի տեղափոխի մէջ արձանագրուած այդ Մանուկը այն անձն է որ Մկրտիչի բերուելուն միջնորդած ու վահարի հետ տեսակցած է: Քննութեանց այս արդիւն-

քնն վրայ նորէն տեղեկութիւն պահանջուեցաւ ժորիսէն, որ ըսաւ թէ քննութեամբ երեւան հանուած Մանուկը տեղափոխի մէջ անունը արձանագրուած Մանուկն է իրօք, թէ նոյն 10 ոսկին Լիւրս Րիւրս յանձնած է իրեն, Սիւլիօ Րիչիի տրուելու համար և ինք ալ Մանուկի տուած է: որով այդ անձն ալ եպերելի անձանց հետ խոստովարարական յարաբերութիւններ ունէր Մանուկի հասցալ անուն կնոջ հետ և թէ օր մը երբ կը խօսուէր Աւստրիոյ հիւանդանոցին մօտերը գտնուած տուն մը պահուած մէլիւրիսները անկէ հանուելու վրայ: ժորիս յայտարարեց թէ ինչ պատրաստ է ծառայելու իր կիներ՝ Աննա Նէլէնը զրկելով և կամ անձամբ երթալով: Բայց Սիւլիօ Րիչի ըսեց թէ այդ գործը Մանուկի ալ կրնայ կատարել: Ատոր վրայ նախ ձոնս արարիւման, նին գոնապան Սըվազի Մանուկ, որ ամբաստանեալներուն հետ կը գրտուել, բերուեցաւ ու հարցաքննուեցաւ: Մանուկ նախ ուրացաւ, բայց երբ ժորիսի հետ զէմ առ զէմ բերուեցաւ, խոստովանեցաւ և ըսաւ թէ Գարլ Եուզանովիչի աշխնքն կարպետ Աշոտի Թրապանի աշխնքն Արտաշ Թորգոմի, վաճառպան Գիւնտիւրեանի և ամբաստանեալներէն երբեմն խոսարար ու յետոյ Պայպըլ Հանուկի շրջունը գրավաճառ Եղիա Գահւզէնէն միջոցաւ: «ԴՐՕՇԱԿ» քովի-թէին մէջ մտնելով յանձն տուած է Գոմիթէին ամէն տեսակ քաղձանքները ու գործողութիւնները կատարել: Մանուկ ըսաւ նաեւ թէ քովի-թէին անդամներուն թիւը աւելցնելու ջանալով, ընկերութեան մէջ մտնուեցած է ամբաստանեալներէն Իշիմէճի Երուանդը, կառուպան Մկրտիչի եղբայրը՝ Յովհաննէսը, քեռորդին՝ Յովսէփը, սրճարար Նաւը, փախստական կօշկակար Արշակը, քաղաքային բժշկական վարժարանին ուսանողներէն ԸԼԼԻԻՄ, նոյն վարժարանէն հետագայ Յովակիմը ու Գարեգինը, և հարկուցեալ Մանուկը: Մանուկ յարեց թէ ատոնց «Դրօշակ» լրագիրը կարգադրուելու տուած, նոյն խափն սենեակին մէջ անոնց հետ խոստովարարական խորհրդակցութիւններ կատարած և վերոյիշեալ անձանց իւրաքանչիւրը զանազան ատրիճանով քովի-թէին գործողութեանց մէջ ծառայել տուած է: նաեւ միւս կողմէ նը-

պատ հաւաքելու ձեռնարկած է եւ Թորգոմի յանձնարարութեամբ Վ. Օ. Թորթոն հասցէն պատրաստելով, այդ հասցէով «Դրօշակ» խոստովարարական լրագրէն բազմաթիւ օրինակներ բերել տուած և Թորգոմի հետ զանոնք գրուած է:
Մանուկ խօստովանեցաւ նաեւ թէ եղեռնական զէպքէն տեղեկութիւն ունի, և թէ զէպքէն առաջ, Թորգոմ, Մկրտիչ ու Սիւլիօ Րիչի այսինքն վահարի իրեն բերին մեծ ծրարի մը մէջ զրուած հրահրութեամբ, որոնց մէկ մասը, Թորգոմի զեկոյցովը, գրավաճառ Եղիայի ու սրճարար Նաւի յանձնած է: Իսկ մնացած մասը և Մկրտիչի քեռորդին՝ Յովսէփի միջոցաւ վահարի զրկած 15 հատ փշտիկաւոր ու պարապ պոնպաները ընդունած է, սակայն վախնալով զանոնք նետած է արարիւմանին հորին մէջ: Այս խոստովանութեան վրայ իսկոյն ձեռնարկուեցաւ ձերբակալու: Մանուկի այն ընկերները որոնց անունները յայտնած էր, Միւս կողմէ նոյն արարիւմանին հորին մէջ խուզարկութեան ալ ձեռնարկուեցաւ: Արդարեւ գտնուեցան 15 հատ փշտիկաւոր պարապ պոնպան, հորին տակէն գտնուեցաւ նաեւ քարիւղի թիթեղեայ տուփի մէջ զրուած ցիւս որ թնդանօթաբան զրկուելով, քննութիւն կատարուեցաւ և հաստատուեցաւ թէ այդ ցիւսին մէջ մէլիւրի պայթուցիկ նիւթը կայ: Մանուկը բացարձակակալ ըսաւ թէ իր կողմէ ընդունուած, մասամբ գրավաճառ Եղիայի ու մասամբ՝ սրճարար Նաւի յանձնած և մնացածն ալ նոյն հորը նետելով բնաջինջ բրած նիւթերուն ամէնքը 30 քիլոյն աւելի էին: Իսկ մնացած 30 քիլո մէլիւրիսն ալ երեւան հանուելու գործին մէջ յաջողութիւն ձեռք բերուեցաւ:
Բերա, Բարի Տէրոյին տակ խանութի մը մէջ հաստատուած սրճարար Նաւն ալ բերուելով հարցաքնուեցաւ: Ան նախակալ ուրացաւ բայց Մանուկի հետ զէմ առ զէմ բերուեցաւ: Անոր խանութին մէջ կատարուած խուզարկութեամբ խանութին շուրջ մէկ մէթին չափ զէպի պատին տակ իջնող ծակեր գտնուեցան, որոնց շուրջ «զինկոյով» պատուած էր՝ ուշադրութիւն չհրահրելու համար: նաեւ քովէն գտնուեցաւ «Դրօշակ» թերթին վերջին թիւերուն

սին պէս նեղ և խորունկ և եւ խոր հեցաւ որ աղէկ պիտի ընէր եթէ հոն երկննար, սուրբով ծածկուէր և քր նանար: Իրիջը միտուած էր հոգին մէջ, փսփոն եզերքը, բրիչը պատրական և կոշոտ գործիքը վանակա նին երազներուն: Ժիւլ զայն վեր վերջուց, կշոնց և գորովանօք նաւեցաւ անոր: Երկաթը խրամատուած էր, կոթը ծռած, և սակայն անիկա իրեն երեցաւ աւելի շոգոտուելու քան աշխարհակալներու սուրը, այդ լեղձ բրիչը, որ միմիայն մշուչ ներ քրքրած էր...
Եւ դեռ երկար ատեն, ան քալեց այդ անվախճան ամառութեանց մէջ տեղի սգախոսուր երազներու անձնատուր որ իր հոգին բոյրովին կը յուզէին: Ամէն քան մահուան վրայ կը խօսէր իրեն: Անիկա մահը կը տեսնէր կծկուած քարերու իւրաքանչիւր զանգուածին ետեւ: Իւրաքանչիւր ճեղքուածքի ետեւ գարանակալ միւրճուած անդեղանման պատուհան-

ներու ստուերին մէջ, և դեռ կանգուն հին պատերուն վրայ քարքարոսները և մամուռները կը գծագրէին մահուան քստմեղի կմախքին ձեւը: Այս յաճախանքին խուսափելու համար, կը յիշէր հայր Բանֆիլի մօրուքը, անոր աչքերը այնքան անհզօրէն գեղեցիկ էրը զը պոռար, «պիտի շիւնե՛մ մատուոր», այնքան քաղցրօրէն միամիտ, երբ կը պատմէր Մարսելիէյին պատմութիւնը: — Մարսելիէյը, կըսէր ժիւլ, արգահատանքով... խեղճ ձեր մարդուկ կը ցաւէր որ ատանկ մէկ մեղամաղ ձոտ օր մը, անիկա հոն չէր գրտնուել: Անոր քովը նստած պիտի կիտուէր անոր սեւ հացը, մտիկ ընելով անոր խանգաղատութիւնները, և ասիկա աղէկ պիտի գար իրեն... Սակայն ձերունին կը թափառէր հեռու ճամբաներու վրայ, իր ցնորքը հետապնդելով անտարակոյս:
Որովհետեւ զլուր ծանր կըզգար, ստամոքսը ճմուռած, որովհետեւ իր

խոնջած անդամները քիչ մը հանգիստ կը պահանջէին, կոտրած գերանի մը վրայ նստաւ, ձօտը այն տաղաւարին ուր կը բնակէր հայր Բանֆիլի: Եւ շարունակեց երազել, իր գէմ կար նոր թափած ձեփերու կոյտ մը, որովհետեւ աղիւսի բեկորները որ տեղ տեղ զանոնք կը ծածկէին, ցոյց կուտային, իրենց կոտորուած քններուն վրայ, խիստ զօրաւոր և փայլուն կարմիր մը, Ջախջախուած մարգակներու, ճաթած տախտակներու, որմաքարերու, աղիւսներու և քարերու մէջնաղէն կը ցցուէին երկայն գամեր, որոնց ծայրերը չիւզեցին ծածկուած էին, ժիւլ նախ և առաջ այս մնացորդներուն ուրիշ ուշադրութիւն չընծայեց, եթէ ոչ ինքնին այն շատ տրտմալի ուշադրութեամբ կը կրնայէր բոլոր այսօրինակ աւերակներու, որոնցմով վանքին բակերը լեցուն էին, և, հակառակ իր մեռնելու բաղձանքին, տեղը վտանգաւոր զատելով կերթար

ապաստանարան փնտուել շէնքերէն հեռուն: Բայց շատ չանցած, թափած ձեփերէն քսան սանդիմէղքի մը չափ հեռուն, սանդալ մը նշմարեց: Եւ այս սանդալը օդին մէջ անշարժ կը ցցուէր, կլոր, սեւ, ուռած, կանաչադաղ քրտինքներէ փայլուն բանի մը ծայրէն: Սանդալին շուրջը ճանճեր, կը թռչուէին, բերուաւոր ճանճեր, որոնց հնչիւն ըզզիւնը արքային սկանջները լեցուց երգէտի աղմուկով մը, միորինակ և երկարաձիգ: Միեւնոյն ատեն, քարահոտութիւն մը եկաւ իր քիթին, կծու և զզուելի հոտ մը որ կը բուրի փրտուած միտերէ, և ստակած անասուններէ:
— Բայց, հայր Բանֆիլի՛, պոռաց և, մէկ ոստու մով վեր ցատկելով՝ կանչեց իբր թէ մէկը կրնար լսել զի՛նքը այդ մեռելական ամառութեանց մէջ:
— Հասէ՛ք... հասէ՛ք... Աս կողմէ՛ն... հասէ՛ք:
(Շարունակելի)

պատկերազարդ մէկ օրինակը. Աստուծոյ պարգաւներուն վրայ ըստեցաւ նրանք թէ ուրացու մի տեղի չէ մնացած. նշանի հարցուեցաւ թէ թորգոմի ազ դարարութեան վրայ Մանուկի կողմէ իրեն յանձնուած պայթուցիկ նիւթերը ինչ ըրած է. Պատասխանեց թէ այդ նիւթերը խանութին մէջ կը պահէր, սակայն եղեռնական արարքէն մէկ քանի օր ետքը Մանուկի հանդիպելով այս վերջինը ըսաւ իրեն թէ այդ նիւթերուն այլեւս պէտք չէ մնացած. հետեւաբար ինքն ալ խանութին անջնակ գտնուած ականի ծակէն վար նետած ու բնաշինջ ըրած է զանոնք. նշան ըսաւ նաեւ թէ «Դրոշակ» խոսքարարական բնկերութեան մէջ մտնելով Մանուկի, թորգոմի ու Աշոտի հետ խոսքարարական յարաբերութիւններ հաստատած էր, եղեռնական մտադրութիւններէն տեղեկութիւն ունի եւ թորգոմ ըսած է իրեն թէ Պոլսոյ մէջ 200 տեղ քարիւղ թափելով հրդեհ առաջ բերելու մտադրութիւն ունի (Շարունակելի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլիս.— Լուր կը շրջի թէ հայ յեղափոխական Գոմիգէն, նամակ մը ուղղած է գեոպաններուն, որով կը բողոքէ անիրաւաբար դատապարտուած հայերուն, բանտերու մէջ շարժարանքի ենթակուելուն դէմ, և կը խնդրէ որ գեոպանները միջամտեն այս մասին. Հակառակ պարագային պիտի դէմէ վրէժխնդրութեան:

— Պոլիս 18 դեկտ.— Անգլիոյ ցոյց տուած ընդդիմադրութեան պատճառաւ, հաւանական է որ սէրու թիւները շրջամաձայնին մաքսային յտուրքը իջնուցուցնել:

Անգլիան կը վախնայ թէ այս բարձրացումէ գոյացած հասոյթը ծառայէ Պաղտատի գերմանական երկաթուղոյ քիւմէթրականը երաշխաւորել:

— Պոլիս 18 դեկտ.— Ռուսական գեոպան Ջինովիէվը, Սուլթանի դէմ եղած մահափորձի առթիւ, Քիւմէթրական գառաւթիւնը չճանչնար և կը պահանջէ դատին վերաքննութիւնը:

— Լոնտոն 18 դեկտ.— Այսօր Օտէսայէն Պոլիս հասած են հայ և հրէայ զաղթականներ կառավարութիւնը թոյլ չէ տուած որ ցամաք ելնեն. Շոգենուաը պիտի մեկնի Ռուսաստան:

— Պոլիս 18 դեկտ.— Լուր կը շրջի թէ, եւէմէնի մէջ ապստամբները վերսկսած են իրենց յարձակումները, աստիական զօրքերու կացութիւնը դարձեալ քրիտիքական է:

— Պոլիս 17 դեկտ.— Սուլթանը Մակեդոնիոյ ելեւտից յանձնախմբին որպէս խորհրդական նշանակած է Ջիւ պէյը. նա յաւանտեսագէտի համրաւ ունի:

Պոլսոյ քաղաքական շրջաններու մէջ կը հաստատեն թէ՛ անոր գործունէութիւնը թուրքիոյ շահերուն նպաստաւոր պիտի ըլլայ. կը կտրժուի նաեւ թէ նա բուն յամառութիւն ցոյց տայու է, և այս կը վրդովէ գեոպանները:

ԻՌԻՍԻԱ

— Բարիզ 19 դեկտ.— Բեթերպուրկէն կիմացնեն թէ՛ է քաղէրինսուլով նահանգի կորիւ վիէ գիւղէն հազար գործաթողներ կրակած են զինուորներու դէմ. գործաւորներէն 300 հոգի մեռած և շատ մը վիրաւորուած. ներկան զինուորներէն միայն 3 հոգի մեռած և 12 վիրաւորուած:

— Բեթերպուրկ 19 դեկտ.— Կառավարութիւնը ազդագրով մը կը յայտարարէ թէ՛ ժողովուրդը կրնայ ապահով ըլլալ. կառավարութիւնը՝ պիտուած ապստամբութիւնը զսպելու համար բաւականաչափ միջոցներ ոյժ ունի. Իսկ գործաւորական կուսակցութիւնը կը հաւատայ թէ՛ Բեթերպուրկին ալ պիտի կրնայ վերածել Մոսքովայի դրութեան:

Գործաւորներու կոմիտէն իր վերջին նիւտին մէջ որոշած է ընդհանուր գործադուլ հրատարակել այսօր, և սկսիլ կազմակերպել զինուած ապստամբութիւն մը:

— Մոսքովայի մէջ ապստամբները կը շարունակեն մասնակի յարձակումներ գործել. ոստիկանութիւնը իր բոլոր ջանքերը կը թափէ՛ ծայրագոյն թաղերու մէջ կեդրոնացած շարժումները զսպելու համար, այս թաղերու բնակիչները գետնափոր յարկերու մէջ կը պահու ըստին. ասոնք սաստիկ կը դժգոհին յեղափոխականներէն. խաղաղ բնակչութիւնը տեղեկանալով որ յեղափոխականները ճաշարանի մէջ հաւաքուած ոստիկանութեան դէմ կը կրակեն:

Իսկոյն պաշարելով ճաշարանը հրկիզած են. նահանգները միջոտ խառնակ դրութեան մէջ կը գրանուին. հասկանող լսւրեր իրար կը յաջորդեն:

— Բոլոնիոյ մէջ զինուորներու և յեղափոխականներու միջև ընդհարում տեղի ունեցած է. վարչակազմի կենտրոնացի վրայ կամուրջ մը և թրէն մը ուժանակով օդը նետուած են:

— Բեթերպուրկ.— Կոստանթնուպոլիսէն բանակէ մը ուժանակով երեւոյթը ունի. անթիւ վակոններ գետը նետուած են. տուներ աւերուած ուժերէ: Միայն Սատովա անունի փողոցի մէջ շարունակեան ուժերը արձակուած են. Հիմա փողոցը պատնէշներէ մաքրուած է:

Յեղափոխականները խենթի պէս կը պատերազմին. 11 նոնց բանակը որ 50,000 հոգի կը հաշուի կը բազկաւայ ուսանողներէ, արուեստաւորներէ, գործաւորներէ և թափառաշրջիկներէ. նոյնպէս զինուորականութիւնը յուսահատօրէն կը կռուի:

Վերջերս յեղափոխականները փոխած են իրենց գործառնութեանց կերպը, հիմայ անոնք զինուորներուն վրայ կրակ կը նեն պատուհաններէն և դուռներէն. 11 յայտի դէպքերու առթիւ, անմիջապէս տուեր թնդանօթի կը բռնուի:

— Պուզարէշու.— Օտէսայէն առնուած լուրի մը համաձայն, հոն յայտարարուած է զինուորական դրութիւն:

Ստրիկանապետը ռուս բնակիչներուն կը ըսէ՛, եղեր «հրէաները կոտորելու ժամը հասած է». Խուլիգանները գրաւած են տուները. Ստրիկանութիւնը անոնց կը բաշխէ օդի և գրամ. Ելեք օրէ ի վեր աճէն գործկեցած է. խանութները գոց են, Հեռագրատուներ և թղթատուներ չը գործեն:

Երէկ կայարանին մէջ տեղի ունեցաւ առաջին ընդհարումը. Խուլիգանները թրէնը ուղեցին կեցնել և կրակեցին:

Ստրիկանութիւնը շատ մը խուլիգաններ ուղարկեց հէտներու դէմ գործելու համար:

Օտէսայի մէջ 150,000 հրէաներ անօգնական լմահուան կը սպասեն:

— Լոնտոն 17 դեկտ.— Բեթերպուրկէն առնուած լուրերու համաձայն, Վուլկայի գետափին վրայ գտնուող նահանգներու մէջ հետզհետէ ժանտախտը կը ծաւալի Ստարախանի, Սարագոփի, Տիւրալի և Սղաւորոլի մէջ հազարաւորներ կը մեռնին. Ժողովուրդը խուռնեւրած դէպի կողկաս կը դիմէ:

— Լոնտոն 17 դեկտ.— Նարվայի մօտերը, յեղափոխականները շորս հատ զինուորական թրէն օդը հանած են. Շատ մը զինուորներ և ձիեր մեռած են:

— Պէրլին 17 դեկտ.— Տոնի վրայ Բոսոյով քաղաքին մէջ տեղի ունեցած են նոր անկարգութիւններ. Հարաւային Ռուսիոյ մէջ հանրապետութեան յայտարարում է. Կառավարիչը յեղափոխականներու դէմ գողաքները կրկնէ: Յեղափոխականները պատնէշներ կանգնած. Վիճաքալ ջութեամբ գիւմարած են. Բեթերպուրկէն թնդանօթի կը կռուին:

— Բեթերպուրկ 17 դեկտ.— Ստրիկանաներու օգան «Մոլվա» լրագիրը կը հրատարակէ հետեւեալ յայտարարութիւնը. Միայն առժամանակեայ երեւոյթութիւնները մը կազմուած Չէ մարզօրներու, քաղաքներու, ընկե-

րութիւններու և գործաւորներու ներկայացուցիչներէն կրնայ այս ապստամբին առաջը առնել. Ով որ այսպիսի երեսփոխանութիւն մը հրահրելու քաջարտութիւն չունի, իր պաշտօնը թող ուրիշին ձգէ:

— Բսթերպուրկ 18 դեկտ.— Իրկայէն ստացուած մասնակի լուրերու համաձայն, հոն տակաւին կը շարունակուի պատերազմը. բուն ընդհարումներ տեղի կուենան զինուորներու և յեղափոխականներու միջև. կը հաւաստեն թէ յեղափոխականները քաղաքին մէջ մասը գրաւած են թաղապետութիւնը, քանի մը հասարակական հաստատութիւններ, կայարանը և հեռագրական գիծերը աւերուած են:

— Պէրլին 18 դեկտ.— Իրկայէն կիմացնեն թէ՛ յեղափոխականները գրաւած են 20,000 փամփուշտ:

Լրպուտէն երկու թորփիլանաւ մեկնած է Իրկա երթալու համար:

— Պէրլին 19 դեկտ.— Օտէսայի մէջ անդորրութիւնը վերահաստատուած է. վաղը շոգենաներու գործադուլը կը վերջանայ:

— Լոնտոն 18 դեկտ.— «Իրպուլիշեր Բրէսիւն» Բեթերպուրկէն կիմացնեն թէ՛ նէվսդիա գործարանին գործաւորներու և գողաքներու միջև սարսափելի ընդհարում մը եղած է:

Սպայ մը ութը գողաք և 27 գործաւոր մեռած են. Շատ մը վիրաւորուածներ կան երկուստեք:

Կառավարութիւնը ձեռք առած է ազդու միջոցներ:

1887 ի. ՏՄՐԻ 1906
ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ
Ուսումնասիրութիւն

Կը մտնէ իւր գոյութեան քսաներորդ տարի շրջանը, և կը շարունակուի իւր ծանօթ ուղղութեամբ և ծրագրով. «Հանդէս Սոսրեայ» իր բնական շայագիտութեան հանդէս՝ պիտի բովանդակէ հայ գրականութեան, մատենագրութեան, բանասիրութեան, լեզուաբանութեան, հնախոսութեան, աշխարհագրութեան պատմութեան վերաբերեալ քննադատական ուսումնասիրութիւններ. ինքն պիտի թարգմանածոյ Չանց պիտի շառնուին հայ ակնաւոր ու գրագէտ անձնաւորութեանց կենսագրութիւնները. նոյնպէս քննադատական տեղեկութիւն պիտի տրուի ազգային կարեւոր լրերու, նոր հրատարակութեանց եւն.— Տարեկան բաժնեգիրն է 10 ֆր. 4 րը. կանխիկ թմրագրութեան հասցէն «Ա. յա Րէտարսիօն տը յա Րըվիւ Հանդէս» Վիէննա (Օդրի) է. թ Միթիթարեանց 4